GIOVANNI BATTISTA BOETTI, 1743—1794 che sotte il nome di Profeta Mansur conquist l'Armenia, il Kurdistan, la Georgia a le Circassia e vi regnó sei anni quale savrano assoluto. Autori vari, OEMME edizioni. Milano, 1989, 191 p., 10 caztine Geografiche, 55 ilst.

ՋՈՎԱՆՆԻ ԲԱՏԻՍՏԱ ԲՈԵՏՏԻ, *1743—1794, Մարգարե Մանսուր անունով նվաճեց Հայաստանը, Քրդստանը, Վրաստանը և Չերքեզիան ու վեց տարի իշխեց որպես բացարձակ միապետ։ Տարբեր հեղինակներ, ՕԷՄՄԷ հրատարակչություն, Միլան, 1989, 191 էջ, 10 քարտեզ, 55 նկար։*

Այս անսովոր վերնագրով գիրքը (իտալերեն լեզվով) նույնքան տարօրինակ, բացառիկ ու արգասաբեր մարդու՝ իտալացի հոգևորական, դոմինիկյան ուխտի քահանա, գործիմաց ռազմագետ, մարգարե և իշխան հռչակված Ջովաննի Բատիստա Բոետտիի կենսագրությունն է, իր գործունեության պատմությունը։ Ծնվել է 1743 թ. հունիսի 2-ին, Նոտարի ընտանիքում, Կասալե Մոնֆերրատոյի մոտ՝ Պիացցանո ավանում։ Մեղների ցանկությամբ Ջովաննի Բատիստան սովորել է բժշկություն։ Մնունդով, դաստիարակությամբ և մշակույթով եվրոպացի, նա հետևեց դոմինիկյանների ավանդությանը, մեկնեց քարոզելու պատմական Հայաստանում, Կովկասում, երկրներ, որոնք XVIII դ. մարդու համար, թվում էին ավելի խորհրդավոր, քան Հնդկաստանը։ Դեռևս պարզ չէ, թե Բոետտին ում միջոցներով է գործել՝ Օսմանյան կայսրությա՞ն թե՞ Հռոմի։ Ճշմարիտը երևի այն է, որ նա աշխատել է Թուրքական Բ. դռան և Վատիկանի հաշվին, միաժամանակ հետապնդել իր իդեալը։ Այս է բացատրությունը զինվորական այն գործողությունների, որ նա ռուս-թրքական պատերազմից (1768—1774) հետո ծավալեց Իրանում, Կովկասում, Անդրկովկասում, Հայաստանում և Վրաստանում։ Քննվող հատորում նշվում է, որ Բոետտին ճանաչում է դառել Մանսուր կամ Շեյխ Մանսուր անվանումով (Մանսուր նշանակում է «հաղթող»)։ Նա արժանացել է այդ կոչմանը, երբ իր հրամանատարության տակ ունենալով 2742 զինվոր, 1783-ին գրավել է Ախալցխան (էջ 109)։ «Հայ ժողովրդի պատմության» IV հատորում կարդում ենք, որ լեռնականները «Հյուսիսային Կովկասում կազմակերպում են իրեն մարգարե հայտարարած Շեյխ Մանսուրի ապստամբությունը ռուսների դեմ, որպեսզի Ումմա խանը (Ավարիայի խանը—Ա. Ջ.) կարողանա անարգել արշավել Վրաստանի վրա»[1]։ 1780-ական թվականների պատմական իրադարձությունները այնպես են դասավորվել, որ Վանի, Ախալցխայի, Էրզրումի, Կարսի և Դաղստանի փաշայությունները գտնվել են Շեյխ Մանսուրի ժամանակավոր ենթակայության տակ[2]։

Հիմք ընդունելով պատմագրությունների տասնյակ տարիներ տևող ժրաջան աշխատանքով ի մի բերված, տարբեր արխիվներում (Սանտրուլ, Հռոմ, Լենինգրադ) պահպանվող փաստաթղթերը, քննվող հատորի հեղինակներին հաջողվել է ուրվագծել իտալացի հոգևորական Շեյխ Մանսուրի՝ այդ բազմաբեղուն, եռանդագին գործչի պատկերը։ Նա եվրոպական լուսավորության զավակ էր, հոգևորական լինելով հանդերձ, որը առումով հոգեհարազատ էր նույն դարին պատկանող Ջ. Կազանովային (1725—1798) և Ա. Կալիոստրոյին (իսկական անունը Ջ. Բալսամո, 1743—1795)՝ երեքն էլ բախտախնդիր, կրոնաբարոյական խնդիրներում ու քաղաքական հայեցողություններում ազատամիտ, գավադրություններ կազմակերպող։ Նրանք գիտվել են որպես հերետիկոսներ և դատապարտվել Հռոմի ինկվիզիցիայի կողմից, եղել են ուժեղ կամքի տեր մարդիկ։

Քննվող գիրքը հավաքական աշխատանքի արդյունք է։ Նախաբանը գրել է Օրնելլա Ռոտան, առաջին գլուխը՝ «Կովկասը 18-րդ դարում. գեղագիտակ վերնագրով, Թուրք գրող և քննադատ Թարիք Քուլլուն, իսկ գրքի գլխավոր մասը, որը վերնագրված է «Ջովաննի Բատիստա Բսեաաե, պատմություն և լեգենդ», երկասիրել են ֆրանսացի հասարակագետ, պատմաբան և կովկասագետ Ալ. Բենիգսենը, Թ. Քուլլուն և իտալացի ազգագրագետ Ա. Ջուլիանին։

---

1 *Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 222։*

2 *Տե՛ս նույն տեղում, XVIII դ. 60—70-ական թվականների Փոքր Ասիայի և Կովկասի քարտեզը, էջ 28—29։*

նյութերը հրատարակության պատրաստողը Հ. Վահրամյանն է։ Հատորում տպագրված են փայտագրություններ, վերցված 1869-ին Փարիզում լույս տեսած Տ. Մ. Դեխռոլի «Ճանապարհորդություն Լաղիստանում և Հայաստանում» աշխատությունից և Միլանում 1895 թ. հրատարակված «Ժողովրդական պատկերազարդում» պարբերականից։

Օ. Ռոտան նախաբանը սկսում է վերհիշելով Բերտոլդ Բրեխտի հետևյալ միտքը. «Երջանիկ է այն ժողովուրդը, որը պահանջ չունի հերոսներիչ» և ամփոփում այս խոսքերը, ասելով. «Երջանկությունը Կովկասինը չէ»։ Ժամանակագիրները մեզ հետաքրքրող անձնավորությանը անվանել են Շեյխ Մանսուր, Իմամ Մանսուր, Շեյխ Օզան-օղլի, Փաֆլիս, Շուրմա, որոնց շուրջ ծագած վեճերը, ինչպես նշում է Ռոտան (էջ 9), շարունակվում են։ Այս իմաստով ևս ներկա գիրքը մի փորձ է, հավանաբար ավելի ամբողջական, քան մինչ այդ գրվածները։ Ռոտան, ամփոփելով իր խոսքը, գրում է. «Ցավոք, Կովկասում հարատևում է հերոսների ավանդը։ Եվ միայն այստեղ չէ, որ մարդիկ շարունակում են մեռնել՝ իրենց էությունը և անկախությունը պաշտպանելու համար։ Չափանիշների ի՞նչ տարբերություն։ Երևի սա է պատճառը, որ Մանսուրը այնքան հավանություն է գտնում 2000 թվականի եվրոպացիներիս մոտ» (էջ 13)։

Թ. Քութլուն, նպատակադրված լինելով իտալացի ընթերցողին ներկայացնել Թուրքիայի՝ Փոքր Ասիայում վարած նվաճողական քաղաքականությունը, անտեսում է պատմական Հայաստանի գոյությունը և Հայաստանը ներկայացնում որպես անդրկովկասյան երկիր։ Բնորոշելով Կովկասը որպես «առասպելների և լեգենդների երկրամաս», նա նշում է, որ «վրացական հնագույն ավանդները պատմում են, թե անվանագիր Թորգոմը բնակություն հաստատեց Արագածի և Արարատի (Հայաստան) միջև ընկած երկրում.... որ Թորգոմի քաջ զավակները (Հայոս, Քարթլոս, Բարգոս, Կովկաս, Մովսական, Լեկոս, Հերոս) ապստամբել ու սպանել են Նիմրոդ բռնակալին, իրար մեջ բաժանել Կովկասի հողերը, ու դրանք անվանել իրենց անուններով» (էջ 15)։ Քութլուն մոռացության է մատնել Աստվածաշնչի և Մովսես Խորենացու վկայությունները այն մասին, որ Թորգոմը եղել է հայոց նախահայր Հայկի հայրը։ Գիտականորեն առավել արդյունավետ են Թ. Քութլուի բերած տվյալները XVIII դ. 60—90-ական թվականների կովկասյան շեյխերին, ինգուշներին և Դաղստանի փոքր ցեղերին առնչվող պատմական իրադարձությունների վերաբերյալ, այդ ցեղերի՝ Եկատերինա Բ-ի գաղութատիրական քաղաքականության դեմ մղված պայքարի մեկնությունները։ Այս պատմական միջավայրում է Մանսուրը ծավալել իր կրոնական, քաղաքական և զինվորական գործունեությունը, նպատակ ունենալով պայքարել Օսմանյան և Ռուսական կայսրությունների դեմ ու ստեղծել կովկասյան և անդրկովկասյան ժողովուրդների միասնական, անկախ պետություն (էջ 17—32)։

Իտալացի պատմաբան Դ. Դամոնտեն իր «Մարգարե Մանսուր Շեյխ-Օզան-օղլու, այն է՝ հայր Բռետտի» (Մոնկալվո, 1882) մենագրությունում նշում է. «Մարգարե Մանսուր անունով Բռետտին գրավեց Հայաստանը, Քրդստանը, Վրաստանը և Չերքեզիան ու իշխեց վեց տարի շարունակ, որպես բացարձակ թագավոր» երևի 1785-ից մինչև 1791 թ.՝ ռուսների կողմից բանտարկվելու տարին։ Ռուսական աղբյուրներում Մանսուրին անվանում են Ուշուրմա կամ Շուրմա (էջ 138)։ Ջ. Բ. Բռետտին հիշողություններ է գրել՝ Օրագիրք։ Մեզ հայտնի են նաև նրա թուրքերեն նամակները՝ հասցեագրված (1784—85) Ֆարահ Ալի Փաշային, ֆրանսերեն «Հաղորդագրությունները», որոնց պատճենները արտատպված են քննվող հատորի գլխավոր հատվածում (էջ 136, 137)։ Նա տիրապետել է մի շարք լեզուների՝ լատիներեն, հունարեն, հայերեն, վրացերեն, պարսկերեն, խոսում էր նաև կովկասյան լեզուներով (էջ 12)։ Նրա գրած նամակները, իր կյանքին վերաբերող տարբեր անձերի զեկուցագրերը պահվում են Հռոմի (Գրոպագանդա Ֆիդեի), Վենետիկի, Սանմարկի կայսերական արխիվներում, նաև Մոսկվայում, Լենինգրադում, Վիեննայում։ Շեյխ Մանսուր Բռետտիի ապրած շրջանի գլխավոր անձինք եղել են՝ կարդինալ Բորջա Ստեֆանոն, Եկատերինա Բ կայսրուհին, Արդուլ Համիդ Ա-ն, Կլեմենս XIV և Գիոս VI պապերը, իշխան Գ. Պոտյոմկինը և այլք (էջ 175—190)։ Բռետտիի կյանքին և պատմական եղելություններին վերաբերող ուսումնասիրությունների մատենագրությունը տրված է գրքի վերջում (183—187), հիշատակված են նաև հայ հեղինակներ՝ Ա. Շեյան, Ա. Սաֆրաստյան, Ս. Ղուկասյան, ռուս հեղինակներ՝ Ն. Սմիռնով, Գ. Բուտկով, Բ. Սքիլկի, իտալացիներ՝ Ֆ. Գիկկո, Է. Օտտինո, Լ. Ֆարռատա։

Բռետտին եղել է փայլուն նախաձեռնող, բացառիկ մտավոր ունակություններով օժտված հմուտ աստվածաբան։ Նա համոզված էր, որ սկզբունքորեն քրիստոնեությունը և մահմեդականությունը իրար համադրելի են։ Տրապիզոնում ապրող իր հայ ընկերոջը 1786-ին ուղղած նամակում նա գրում է. «Ախ, Հռո՜մ, Հռո՜մ։ Ինչպե՜ս կորցնում ես քո զավակներին։ Հռոմ, Հռոմ, դու անարդար... և եթե բախտը նպաստավոր լիներ, Ասիայում և Եվրոպայում պիտի տիրեր միմիայն մի կրոն։ ...Բարեփոխենք մուսուլմանական կրոնը, վերականգնենք նրա մաքրությունը և պիտի տեսնենք, թե ինչպես այն նման է քրիստոնեականին, նա էլ կարող է մաքրության։ Գոյություն ունի միմիայն մի Աստված և մի օրենք, իր մարգարեները շատ են, ես նրանցից մեկն եմ, շատերը գալու են ինձանից հետո» (էջ 123)։ 1786 թ. էր, որ Շեյխ Մանսուր Բռետտին ստեղծեց իր կրոնաբարոյագիտական վարդապետությունը՝ 24 պատգամներից բաղկացած, դրանից 17-ը գրում ասված է. «Պապը և մուֆտին զրպարտիչներ են» (էջ 121)։ Այս սինկրետիկ կրոնը Շեյխ Մանսուր Բռետտին տարածել էր պարզապես, թերևս, չերքեզ և կովկասյան այլ ցեղերի կովողներից բաղկացած իր բանակում, որոնց թիվը 1786-ին, երբ մարգարե-զեներալը գրավում է Ավազը, հասնում էր 80.000-ի (էջ 123)։ Նա բացառիկ նշանակություն էր տալիս այդ ցեղերի սովորություններին և ավանդներին, դրանք համախոհության ապահովման միջոց համարելով, միաժամանակ գտնում էր, որ «Վրաստանում տարած վերջին հաղթանակները պետք է ներշնչեն անդորր ապահովություն, խոստանալով նորանոր, ավելի կարևոր հաղթանակներ։ Պետք է բնաջնջել աշխարհի բոլոր Բաբելոնները, այդ գործում ես միայն միջոց եմ Աստծո ձեռքում» (էջ 127)։ Իսկ իր մի քարոզչության առիթով ասում է. «Ես տեսա Նինվեի ավերակները, դրանք լավ ուսումնասիրեցի, երբ ես այնտեղ էի, բայց Յոնասին չտեսա, մինչդեռ ես ապրելու եմ այնքան, որ տեսնեմ Կոստանդնուպոլսի ավերակները» (էջ 125)։ Այսքանով հանդերձ, Վենետիկում լույս տեսնող «Աշխարհի լուրեր» օրաթերթում Կոստանդնուպոլսի իտալացի թղթակիցը (անունը չի հիշատակվում) 1786 թ. մարտի 13-ի համարում գրում է. «Այստեղ իշխում է այն մտահոգությունը, որ Շեյխ Մանսուրը ձգտում է խանգարել Ասիայի խաղաղությունը, և այս նոր մարգարեն, կրոնի պատրվակով, փորձում է մեծացնել իր կուսակցությունը և հասնել իշխելու մեր կայսրության ավերակների վրա։ Նման երկյուղները, ճիշտ թե սխալ հիմնավորված, մտահոգում են Մոհամեդի հետևորդներին, բայց պատկերացումը, որ այստեղ կա այդ ռեֆորմիստի վերաբերյալ, այն է, որ, նա ոչ բարբարոս է և ոչ էլ հիմար մոլեռանդ։ Նա արտաքուստ արտակարգ բարեհաճ տեսք ունի, իր վարդագիծը, ինչպես ասվում է, արտասովոր մարդասիրական է» (էջ 124)։ Իսկ Շեյխ Մանսուրը (նույն տարին) գրում էր. «Կոստանդնուպոլսի մուֆտին և Մեքքայի շերիֆը տգետ են և խաբեբա, նրանք կույր են ու պետք է լուսավորվեն։ Նույն Սելիմը (օսմանյան Սելիմ Գ սուլթանը—Ա. Զ.) պետք է դիջե իր տեղը (դահը) և հեռանա» (էջ 124)։ Նա իր զինվորների նկատմամբ կարգապահության և կրոնական ծիսակատարությունների հարցերում խստապահանջ էր, երբեմն անողոք։

Գրքի հեղինակներից Ա. Բենիգսենը գրում է, որ Բռետտին իր հորինած պատգամները «գրավոր բաժանել էր իր բոլոր զինվորներին, որոնք ընթերցելուց հետո երդվեցին հավատարիմ մնալ այդ պատգամներին։ Այդ ժամանակ մարգարեն անվերապահ դիրք բռնեց ու ասաց. «Պետք է սպանել բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում այս պատգամները»։ Եվ բոլորը պատասխանեցին՝ եղիցի։ Երկու օր անց, շարունակում է Բենիգսենը, նա ձի հեծած անցնում էր զորքի ճամբարով ու տեսնում է, որ երկու թուրք աղոթում են իրենց հին սովորության համաձայն, նա կանգ է առնում, հանդիմանում նրանց, և ասում, որ պետք է մեռնեն, որովհետև հավատարիմ չեն մնացել իրենց երդմանը։ Սուրբ մարգարեն, մեկին գնդակահարում է, իսկ մյուսին խոցում իր դաշույնով։ Այս բոլորը նա արեց ամենամեծ պաղարյունությամբ» (էջ 121, 123)։

Նա առաջ է քաշում կնոջ և տղամարդու հավասարության հարցը սոցիալ-տնտեսական, բայց հատկապես ընտանիքի ոլորտում ու առաջարկում թրքական և իրանական կենցաղում ավանդաբար պահպանվող կանանց ճորտատիրական իրավական նորմերի համակարգում բարեփոխումներ մտցնել ի նպաստ կանանց։ Այդ մասին է գրում Մանսուրը՝ 1786-ին Կոստանդնուպոլսում հրատարակված «Նոր ուսմունքում». «Տգա և աղջիկ զավակները ընտանեկան ժառանգության հավասար իրավունքների տեր են, ավագ զավակները վայելելու են միայն այն հարգանքը, որ մատուցվում է առավել տարիք ունեցողներին։ Հարկ է համոզել ամուսիններին, որպեսզի ավելի ազատություն տան իրենց կանանց ու նրանց հետ չվերաբերվեն որպես ճորտերի։ Ամուսինները պետք է միասին նստեն հացկերույթի, հավասարապես մասնակից լինեն

ընդհանուր խոսակցություններին, կինը պետք է հմուտ լինի այն գիտելիքներին, որոնք հարատատ են իրեն, և հարկ է, որ իրենց երկրի լեզվով գրել ու կարդալ իմանան» (էջ 118)։

Ինչպես արդեն ասվեց, Շեյխ Մանսուր Բոետին լուսավորության գարի զավակ էր, ազատությունը, եղբայրությունը և հավասարությունը նրա ոգուն հարազատ գաղափարներ էին։ Նա փորձել էր այդ գաղափարները տարածել իսլամական միջավայրում կրոնասոցիալական բարեփոխումների միջոցով, իսկ կանանց իրավունքների համար մղած պայքարը նա սկսել էր դեռևս XVIII դ. 80-ական թվականներին։ Քաղաքակիրթ Եվրոպայի երկրներում կանանց ազատագրության շարժումները, հատկապես անգլիախոս երկրներում, սկիզբ են առել XIX դ. կեսերին։ Նա դեմ էր հարեմների և ճորտերի առևտրին, դեմ էր նաև ճորտատիրությանը, երբ Կովկասին և Անդրկովկասին տիրանալու հավակնություն ունեցող Ռուսական կայսրությունը միայն 1861-ին է վերացրել ճորտատիրությունը։

Այսքանով հանդերձ, նա միստիկ անձնավորություն էր, իր հետևորդներին քարոզում էր, որ ինքը ունի աստվածային առաքելություն, Աստծո անունից ապագան գուշակելու զորություն, որ ինքը Ղուրանը բարեփոխողն է, համաշխարհային հանճար է, արքոն ոգի, որը հսկում է «իր ժողովուրդի» ճակատագիրը։ Իր մասին նա գրել է. «Այդքան դարեր չարունակ լինելով Օլիմպոսի զվարթ լրատուն, վերջապես գահավիժել ես անխոհեմ Մոհամմեդ, և դու ես բարձրանում նրա տեղը, ո՜ լուսավորիչ Մանսուր... քո սիրտը ադամանդյա է. այքերդ արձակելու են երկու տեգ, որոնք խոցելու են բոլոր նրանց, ովքեր քեզ պիտի ընդդիմաբանեն, քո պողպատյա բազուկը տապալելու է ամենակատաղի թշնամիներիդ, քո ոտքերը չանթից ավելի արագ են, քո կուրծքը բրոնզյա է» (էջ 122, 124)։ Շեյխ Մանսուրը, որը հորջորջվում է նաև իշխան, ներկայանում է որպես հոմերոսյան Օլիմպոսի աստված, լեգենդների հերոս։ Հին Հրեաստանի մարգարեների նմանությամբ նա քարոզել է ապագայում հասարակական արդարության հաղթանակը, միաստվածության գաղափարը, արգելել է պաշտամունքային որոշ ծեսեր (մկրտություն և թլփատություն, ոսամագամ և քառասնորդքի պահքը) և ամեն բանից վեր է դասել բարոյական սկզբունքները։

Հատորում ընդգծվում է Շեյխ Մանսուրի կրոնաքաղաքական ուղղվածությունը։ Նա՝ դոմինիկյան ուխտի այդ քահանան, 4! տարեկանում արդեն շրջել էր Եվրոպան, Սերձավոր արևելքը, պատմական Հայաստանը, Կովկասը և հասել էր Պետերբուրգ, ուր գեներալ-ֆելդմարշալ Գ. Պոտյոմկինին առաջարկել էր իր ծառայությունները կովկասյան հարցերում, բայց նրա չանքերը եղել են ապարդյուն։ Հավանական է, որ նա, ազդված է եղել 1780-ական թվականներին Պոտյոմկինի առաջ քաշած՝ Անդրկովկասում հայկական, վրացական և ալբանական մեկ պետություն ստեղծելու ծրագրից։ Գ. Պոտյոմկինը, այդ տարիներին սերտ կապերի մեջ էր հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ Հովհ. Լազարյանի և Հովհ. Արզումյանի հետ և փայփայում էր Հայաստանի թագավոր լինելու միտքը։ Շեյխ Մանսուրի պետերբուրգյան առաքելությունը ձախողվեց, նա վերադարձավ Դաղստան, ուր, ինչպես և Հյուսիսային Կովկասում, ցեղերը էթնիկապես և քաղաքականապես մասնատված էին։ Նա կրկին փորձում է միասնական պետություն հիմնել, քանի որ, այդ ցեղերի մեջ ևս գոյություն ունեին ազատասիրական և հայրենասիրական տրամադրություններ (էջ 27)։

Այդ տարիներին իսլամական միջավայրում նոր թափով ծաղկեց սուֆիզմը՝ կրոնական քողարկված ուղղությունը, որը կազմավորվել է VII—IX դդ. Բազդադում, Բասրայում, Դամասկոսում և այլ քաղաքներում ու մշակույթի կենտրոններում։ Սուֆիզմը կրել է քրիստոնեության, գնոստիզմի, նոր պլատոնականության և զրադաշտականության ազդեցությունները։ Նշանակալից է XII—XV դդ. պարսկական սուֆի բանաստեղծության թողած ազդեցությունը Եվրոպական գրականության վրա։ Սուֆիզմը ունեցել է և ունի քաղաքական մեծ նշանակություն։ Ներթափանցելով Կովկաս, այն նպաստել է եղբայրակցությունների կազմավորմանը, որոնք իրենց տարբերել են թե՛ «անհավատ» քրիստոնյաներից և թե՛ «տարամետ» մահմեդականներից։ Թ. Քութլուն նշում է. «Այս եղբայրակցությունները հզորացնում էին իրենց կրոնական մշակույթը, ղազավաթի ինքնությունը՝ սուրբ պատերազմի հաճախակի կոչերով, բայց անկարող էին կազմել պետականության երկարատև ծրագրեր, ինչպես հետագայում ապացուցելու էր պատմությունը» (էջ 31)։ Նման իրադրության ոլորտում Հյուսիսային Կովկասի ժողովուրդների միավորումը՝ որպես քաղաքական-պետական միասնություն, եղավ Բոետիի վերջին ծրագիրը։

Իսլամական միջավայրում կրոնական-փիլիսոփայական ուղղությունները նպաստել են գաղութատիրության դեմ մղված ազգային անկախության պայքարին։ Այս առումով Քութլուն

հիշատակում է հետևյալ փաստը. «կայսրություններից անկախություն պահանջող հայտնի զեկավարներից Մոհամմեդ իբն՝ Աբդ ալ-Վահաբ Նաջդեցու (1707—1787) հետևորդներից Շահ Վալիուլլահը Հնդկաստանում կազմակերպեց հակաանգլիական ուժեղ շարժում (որին հնդիկների հետ մասնակցում էին նաև հայերը)։ Վերջիններս .զինվորագրվել էին Փենջաբի հնդկահայերի գաղութից» (էջ 21)։ Հետևաբար, շարունակում է Թ. Քուքլոն, հասկանալի է, թե ինչու կովկասյան փոքր ժողովուրդների անկախությունը պահանջող «չեչեն» հորջորջված Շեյխ Մանսուրը, Ս. Պետերբուրգի այքին դիտվել է «ապստամբ», բարբարոս, խռովարար և հեղափոխական, ուստի Շեյխ Մանսուրի շարժումը հարկ էր ոչնչացնել ի սկզբանե (էջ 21)։

Հյուսիսային Կովկասում ինքնիշխան պետությունների միություն, դաշնակցություններ անկախություն և կրոնների միասնություն ստեղծելու՝ Շեյխ Մանսուրի ծրագիրը, Ռուսական կայսրության դեմ սրբազան պատերազմ հայտարարելը, դրական արդյունքներով հանդերձ, մի քանի տարի միայն հնարավոր եղավ իրականացնել։ Կովկասում 1785 թ. հունիսի 26-ին ռուս հրամանատարության պարտության հետևանքով ժամանակավորապես չեղյալ համարվեց 1774-ի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված Քյուչուկ-Կայնարջիի պայմանագիրը։ Այդ տարիներին, թրքական աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն, ռուսների պարտությունը ոգևորություն առաջացրեց Կովկասի մահմեդական ցեղերի մեջ։ Ալդիի կոիվներից հետո ռուսները հարձակվեցին իմամ Շեյխ Մանսուրի՝ չեչեններից բաղկացած բանակի վրա, բայց պարտության մատնվեցին (էջ 155)։ 1785-ի հուլիսին «կովկասյան գիծը» գրավելու նպատակով չեչենների, Դաղստանի ցեղերի և կաբարդինացիների կոիվները «ալլահի ուղարկած իմամի» ղեկավարությամբ մեծ մասամբ պարտությամբ ավարտվեցին, չնայած այն իրողությանը, որ Շեյխ Մանսուրի ղեկավարած «սուրբ պատերազմը» 1785-ի հոկտեմբերից սկսած տարածում գտավ Սև ծովից մինչև Կասպից ծովի երկրամասը։ Այդ պայքարին մասնակցել են նաև էնդերի իշխան Կումիկ Ալի Սուլթան Զեպալով-Մուրտազալին և Կաբարդիայի Դոլ իշխանը։ Կոիվները շարունակվեցին մինչև 1786-ի հոկտեմբեր, երբ Շեյխ Մանսուրը խաղաղության դաշինք առաջարկեց Կովկասի ռուսական բանակի հրամանատար գեներալ Պոտյոմկինին, որը մերժեց (էջ 163)։

Շեյխ Մանսուրի՝ ռուսների դեմ մղած կոիվների երրորդ՝ վերջին շրջանը համապատասխանում է ռուս-թրքական՝ 1787—1791 թթ., պատերազմի տարիներին։ Ռուսական գեներալներ Տոկելլին, Բիբիկովը և Գուդովիչը հերթական պարտությանն են մատնում Շեյխ Մանսուրին։ Իսկ 1791 թ. հունիսի 21—22-ին ռուսական բանակը գրավում է Անապան, գերի վերցնում թշնամի բանակի ղեկավար Մուստաֆա փաշային, նրա որդի Բաթալին և «կեղծ մարգարե Ուշուրմային», այն է՝ Շեյխ Մանսուրին։ 1791 թ. հոկտեմբերի 15-ին Եկատերինա Բ-ի հրամանի համաձայն Շլիսսելբուրգ ամրոցի հրամանատար գնդապետ Կոլյուբակինը Շեյխ Մանսուրին դատապարտում է ցմահ բանտարկության, քանի որ նա «լեռնային ժողովուրդներին խռովություններ է մղել Ռուսաստանի դեմ և կայսրությանը հասցրել ծանր վնասներ» (էջ 173)։ Շեյխ Մանսուրը վտարվել է Սպիտակ ծովի Սոլովեցկի մենաստան, ուր մահացել է 1794-ի ապրիլի 13-ին։ Ասվում է, որ նա թաղվել է Պրեոբրաժենսկայա դորա գերեզմանատանը։ Այլոց կարծիքով նրան հաջողվել է փախչել ու ապաստան գտնել իր այնքան սիրած Լեռնային Կովկասում։ Այսպես ավարտվեց առասպելական Ջովանի Բատիստա Բոետտիի կյանքը։

Ա. Կ. ՉԱՐՅԱՆ
Ճարտարապետ